ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2025թ. **N_____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանով անցնող Հրազդանի կիրճ փողոցն *(սկսվում է Աթենքի փողոցից՝ Հրազդան մարզադաշտի հարևանությամբ, հասնում Հալաբյան փողոց)* անվանափոխել լեգենդար խորհրդային ֆուտբոլիստ և մարզիչ, օլիմպիական չեմպիոն, «Արարատ-73»-ի գլխավոր մարզիչ Նիկիտա Սիմոնյանի անվամբ՝ «քաղաք Երևան, Նիկիտա Սիմոնյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նիկիտա Սիմոնյանը ծնվել է 1926 թվականի հոկտեմբերի 12-ին, Ռուսաստանի Արմավիր քաղաքում, հայ ընտանիքում: Սիմոնյանը խորհրդային ֆուտբոլի լեգենդ է, ականավոր հարձակվող, մարզիչ և սպորտային ֆունկցիոներ: Նա սկսել է ֆուտբոլ խաղալ Սուխումում, իսկ 1946 թվականին տեղափոխվել է Մոսկվա, ուր դարձել է «Սպարտակի» խաղացող: Հաջորդող 10 տարիների ընթացքում նա դարձել է շուրջ 160 գոլի հեղինակ՝ համարվելով թիմի լավագույն ռմբարկու: Երեք անգամ դարձել է ԽՍՀՄ առաջնության լավագույն դիպուկահար, չորս անգամ՝ երկրի չեմպիոն: 1956 թվականին Սիմոնյանը ԽՍՀՄ հավաքականի կազմում դարձել է օլիմպիական չեմպիոն: 1958 թվականի աշխարհի առաջնությունում նա թիմի ավագն էր և խփել է առաջին գոլն Անգլիայի հավաքականի դարպասին՝ հայկական ազգանունը բարձրացնելով ամբողջ ֆուտբոլային աշխարհում: Ֆուտբոլիստի կարիերայից հետո դարձել է ականավոր մարզիչ: Նրա առաջնորդությամբ 1962 թվականին «Սպարտակը» դարձել է ԽՍՀՄ չեմպիոն, իսկ «Արարատը» 1973 թվականին՝ ԽՍՀՄ գավաթակիր:

Նիկիտա Սիմոնյանը 1990-ականներից պաշտոններ է զբաղեցրել Ռուսաստանի ֆուտբոլային միությունում, եղել է ՌՖՄ փոխնախագահ, տեխնիկական կոմիտեի նախագահ, երկիրը ներկայացրել է ՈՒԵՖԱ-ում և ՖԻՖԱ-ում: Սիմոնյանը միշտ հպարտացել է իր հայկական արմատներով՝ անգնահատելի ներդրում ունենալով հայկական ֆուտբոլի զարգացման հարցում, մասնակցելով մարզիչների պատրաստման ծրագրերին: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի բնութագրմամբ՝ ***Նիկիտա Սիմոնյանը միշտ փայլել է, փայլել է որպես ֆուտբոլիստ, մարզիչ և պաշտոնյա՝ իր անունը ոսկե տառերով գրելով հայկական և խորհրդային ֆուտբոլի պատմության մեջ***:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 2387-Ն որոշման 16-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանով անցնող Հրազդանի կիրճ փողոցն (սկսվում է Աթենքի փողոցից՝ *Հրազդան մարզադաշտի հարևանությամբ,* հասնում Հալաբյան փողոց) անվանափոխել լեգենդար խորհրդային

ֆուտբոլիստ և մարզիչ, օլիմպիական չեմպիոն, «Արարատ-73»-ի գլխավոր մարզիչ Նիկիտա Սիմոնյանի անվամբ՝ «քաղաք Երևան, Նիկիտա Սիմոնյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 2387-Ն որոշման 2-րդ բաժնի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար՝ Մանուկ Սուքիասյան